

<<Հ Ա Յ Ն Ա Խ Ա Գ Ի Ծ>>

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Նոր Նորքի վարչական շրջան, Բագրևանդի փողոց 52/16
հասցեում նախատեսվող <<Ինժեներական քաղաք>>-ի ինժեներական
բիզնես արտելերատորի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

<<Հայնախազիծ>> ԲԲԸ
Տնօրեն՝



Գ. Ազիզյան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2Հապավումներ	3
1.3Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	221
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	221
2.1.1 Կլիման	Error! Bookmark not defined.1
2.1.2 Օդային ավազան	2423
2.1.3 Ջրային ռեսուրսներ	45
2.1.4 Հողերի նկարագիրը	5857
2.1.5 Թափոնների կառավարում	5857
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	5958
3.1 Ռիսկերի գնահատում	5958
3.2 Արտանետումների աղբյուրները	6059
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	6059
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	7064
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ...	6665
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	2571

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Երևան, Նոր Նորքի վարչական շրջան
- 1.6 Հեռախոս՝ (+374 10) 575 895
- 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ Նախագծի գլխ. Ճարտարապետ Մհեր Չերքեզյան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ԲԲԸ՝ Բաց Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, դրանց նկարագրիչը, որը հիմք կհանդիսանա շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառմանն ուղղված պարտադիր միջոցառումների մշակման և կիրառման համար:

<<Ինժեներական քաղաք>>-ի ինժեներական բիզնեսաքսելատորի շենքի կառուցման նախագիծը նախատեսվում է ք. Երևան, Նոր Նորքի վարչական շրջան, Բագրևանդի փողոց 74 հասցեում: Աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /Այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրությային փաստաթղթի ընդունումը և (կամ) նախատեսվող գործունեության իրականացումը: Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝

- 1) նախնական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում է նախնական գնահատման հայտը.
- 2) հիմնական փուլ, որի ընթացքում փորձաքննվում է հիմնական գնահատման հաշվետվությունը:

Համաձայն Օրենքի հայտը՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրության փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ է:

Փորձաքննության նախնական փուլն իրականացվում է ձեռնարկողի կողմից նախնական գնահատման հայտը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Փորձաքննության նախնական փուլում՝

1) քննարկվում է ներկայացված նախնական գնահատման հայտի լրակազմությունը.

2) կանխորոշվում են շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության շրջանակները, Ա և Բ կատեգորիաների համար սահմանվում են գնահատումների հաշվետվության բովանդակությունն ու դրան վերաբերող պահանջները, որոշվում են գործընթացի մասնակիցների շրջանակները, կազմվում և ձեռնարկողին է տրամադրվում այդ ամենն ամփոփող ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանքը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման 31.03.2021թ. N 31032021-01-0272 վկայականը, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 25.01.2021թ. N01/18-07/1-Խ-3954-13 նախագծային /ճարտարապետական հատակագծային/ առաջադրանքը, ինչպես նաև <<ԳԵՈՏՈՊ>> ՄՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման, հատակագիծը՝ համապատասխան կոորդինատներով:

Ք. Երևան, Նոր Նորքի Բագրևանդի փողոց 52/16 հասցեում <<Ինժեներական քաղաք>>-ի ինժեներական բիզնեսաքսելերատորի շենքի նախագիծը մշակվում է <<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից՝ համաձայն ՆՊ 001-ՄՉ 20 պայմանագրի (Պատվիրատու՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ. ՀՀ վարչապետի աշխատակազմ.): Գլխավոր հատակագծի համաձայն՝ ինժեներական քաղաքի արքսելերատորը տեղակայված է ընդհանուր քաղաքի հողատարածքի հարավ-արևելյան հատվածում: Կառույցը 4 հարկանի 70.0մ երկայնական և 28.0մ լայնական առանցքային չափերով:

Տվյալ նախագիծը մշակելիս գլխավոր միտքը եղել է ունենալ շահագործվող կանաչապատ տանիքային գոտի, որը կհանդիսանա տվյալ կառույցի 5-րդ և գլխաբոր ճակատը: Նմանատիպ լուծումը ստեղծում է հարմարավետ, կոմունիկացիոն հետիոտն

կապ հարկերի միջև, բարելավում է էվակուացիոն պայմանները և ստեղծում բացօթյա աշխատանքի միջավայր բարենպաստ եղանակային պայմաններում:

Կիրառվել են արևապաշտպան կոնստրուկցիաներ, որոնց լուծումը բացի ֆունկցիոնալից ունի էսթետիկական և միջավայր ձևավորող նշանակություն: Կազմակերպված են ներքին ջրահեռացումներ:

Կառույցի արտաքին հարդարման հիմնական նյութերն են բետոնե մակերևույթները, մեծ ապակեպատ մակերեսները և որոշ տեղերում փայտի և մետաղի կիրառումը: Նախատեսվող շինությունը ունենալու է անհատական ջեռուցման աղբյուր՝ կաթսայատուն:

Կաթսայատունը նախատեսված է միայն ինժեներական բիզնես արքսելերատորի շենքի ջեռուցման և տաք ջրով ապահովման համար: Որպես վառելիք հիմնականում օգտագործվելու է բնական գազը, իսկ պահուստային կամ վթարային իրավիճակի դեպքում՝ հեղուկ /դիզելային/ վառելիք: Ելնելով ջերմային ծախսից նախատեսված են ավտոմատացված ջրային 4 կաթսաներ՝ հիմնական և վթարային՝ համապատասխանաբար 2×400 կՎտ և 2×260 կՎտ նոմինալ ջերմարտադրողականություններով: Կաթսայատան տեղակայված ջերմության հզորությունը /ջեռուցում/՝ 800 կՎտ, պահուստային ջերմության հզորությունը՝ 12 կՎ: Գազի ժամային ծախսը ձմռանը՝ 147.87 Նմ³/ժամ, իսկ հեղուկ վառելիքի ծախսը ձմռանը՝ 112.07 կգ/ժամ: Գազի միջին օրական ծախսը ջեռուցման շրջանում կկազմի 2517 Նմ³/օր, իսկ հեղուկ /դիզելային/ վառելիքինը՝ 1907 կգ/օր:

Կաթսայատունը նախատեսվում է տեղադրել շենքի - 4.10 նիշում, իսկ հեղուկ /դիզելային/ վառելիքի ստորգետնյա պահեստարանը՝ ըստ գլխավոր հատակագծի, տեղակայվելու է շենքին կից տարացքում, զբաղեցնելու է մոտ 36.7մ² մակերես, կազմված է լինելու 2 բաքից՝ յուրաքանչյուրը 5.0տ տարողորթյամբ: Կաթսաները համալրված են ավտոմատացված համակցված այրիչներով գազի և հեղուկ վառելիքի համար: Յուրաքանչյուր կաթսա համալրված է $\varnothing 273 \times 10$ մմ տրամագծով և մինչև +15 նիշը բարձրացող առանձին ծխնելույզներով:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

Բնակելի և հասարակական տարածքներում ապահովվելու են բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմանները:

<<ՀԳՇՆ>> ՄՊԸ-ի կողմից ներկայացված <<Երևան քաղաքի, Նոր Նորք վարչական շրջանի, Բագրևանդի փողոց 74 հասցեում նախատեսվող ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը /որտեղ ներառված է նաև Բագրևանդի փողոց 52/16 հասցեում նախատեսվող ինժեներական բիզնեսաքսելերատորի շենքը/ ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և 15.07.2021թ. ստացել է թիվ ԲՓ 0127-21 դրական եզրակացություն:

Կառույցի տեխնիկա - տնտեսական ցուցանիշներն են.

- Բագրևանդի փողոց 52/16 հասցեում գտնող հողամասի մակերես՝ 2556.6 մ²,
- Կառուցապատման մակերես՝ 2105.0մ²,
- Կառույցի ընդհանուր մակերես ներառյալ շահագործվող տանիքներ՝ 9450.0մ²,
- Կառույցի օգտակար մակերես՝ 6160.0մ²,
- Կառույցի շինարարական ծավալ՝ 26520.0մ³:


Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, օգտագործման, իսկ նպատակը՝ հասարակական կառուցապատման համար:


Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման նախագիծը նույնպես <<ՀԳՇՆ>> ՄՊԸ-ի կողմից ներկայացված <<Երևան քաղաքի, Նոր Նորք վարչական շրջանի, Բագրևանդի փողոց 74 հասցեում նախատեսվող ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտը /որտեղ ներառված է նաև Բագրևանդի փողոց 52/16 հասցեում նախատեսվող ինժեներական բիզնեսաքսելերատորի շենքը/ ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և 15.07.2021թ. ստացել է թիվ ԲՓ 0127-21 դրական եզրակացություն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:



ԻՐԱԿԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:5000



 <p>Հայաստանի Հանրապետության Պետական կառուցողական կոմիտեի Հայաստանի Հանրապետություն ք. Երևան, Չարենցի 1 Էլ. փոստ: hkh@armproj.am</p>	
<p>Պատվարով:</p> <p>ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՎՈՒՐԱՏՈՐ ԳՆԱՆԱԴՐԱՄ. ԳԳ ՎՈՐՉՂԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՆՍ.</p>	
<p>ԳՅ. ք. Երևան, Նոր Նորքի Բազրանդ փողոց 52/16</p>	
<p>Սահագործող անվանումը: ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԲԱՂԱՅՁՈՒ ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԲԻՉՆԱԿԱՆ ԱՐԱՆԵՐԱՏՈՐ ԾԵՆՔԻ ՆԱԽԱԿԻՑ</p>	
Փուլ	Մաս Այրմ Գիրք Դատող
ԱՆ	ՃՄ 1 1
<p>ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԱՐԱՆԵՐԱՏՈՐ</p>	
<p>Գծագրի անվանում: ՈՐԴՂԱԾԻԳ ԳՆԱՏԱԿԱԳԻՑ</p>	
<p>ՆԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՆԵՆՆԵՐԱՆՎՈՒՄ ԵՎ ՈՐԴՂԱԾԻԳ ՆԵՐԱՊՈՒՆ ԳՆԱՆԱԿՈՒՄ 1376.5 ՆԻՇՆ</p>	
Գծագրի ճՄ-02	Էլ. Ֆայլ A.110.02
<p>Մասշտաբը Մ 1:500</p>	
<p>Կատարող ըամբի անվանումը: Մ. ՉԵՌԻՅՅԱՆԻ ԳՆԱՏԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՆԱԿԱՆՈՒՄ</p>	
ՆԳԳ	Մ. Չեռեզվան
Ճարտարապետ	Ս. Ստաբրյան
<p>Պատվերը ՆՂ 001-ՄՉ 20</p>	
ամսաթիվ	արիելի համար գրառման համար
<p>Փոփոխություններ</p>	
1	
2	
3	
4	
Կց 4	39

ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԼԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով՝ վերնից-ներքև ներկայացված է հետևյալ գրունտների շերտերով

- Շերտ – 1 Կավավազի, անցնող փոշային ավազի, բաց գորշ ու դեղնագորշ, կարբոնատացված, խճով ու խճավազով 10-30% , սակավախոնավ, պինդ, տեղ-տեղ դեղնասպիտակագույն /սպիտակահողեր/: Շերտն անհամասեռ է, տեղամասում համատարած է 0,6-3,5մ հզորությամբ:
- Շերտ-2 Խիճ կարբոնատային կեղևի ու բազալտի, խճավազով ու մանր մեծաբեկորներով, դարչնագույն և բաց գորշ և դեղնավուն կավաավազի ու փոշային ավազի լցանյութով 5-30%: Շերտն անհամասեռ է, տեղադրված է գրունտային կտրվածքի վերին մասերում, տեղ-տեղ ֆացիալ անցնող կավավազների /շերտ-2/, տեղամասում համատարած է 1,0-4,0մ հզորությամբ:
- Շերտ – 3 Ուժեղ հողմնահարված, թույլ խարամած բազալտ, մոխրագույն, խճային ու մանրաբեկորային անջատումներով, փոշային ավազի ու կավավազի լցանյութով միջբեկորային տարածություններում: Շերտն անհամասեռ է, տեղամասում բացահայտվել է 1-ին հորատանցքում, 1,7մ հզորությամբ:
- Շերտ– 4 Բազալտի խարամ մոխրագույն, մանր խճի ու խճավազի տեսքով, մոխրագույն ավազի լցանյութով: Շերտը տողամասում բացահայտվել է 1-ին հորատանցքում, 0,7մ հզորությամբ: Պետք է նշել, որ տեղամասին հարակից տարածքում փորված հորատանցքերում բացահայտվել են խարամներ /կարմրավուն, վարդագույն / , մինչև 1,8մ հզորությամբ: Խարամները բազալտային լավայի հաստվածքում տեղադրված են առանց որևէ օրինաչափության, տարբեր չափերի ուսպնյակների ենթաշերտերի, գրպանների տեսքով:
- Շերտ- 5 Բազալտի մոխրագույն, ճեղքավոր, ծակոտկեն,, ամուր, վերին մասում տեղ-տեղ թույլ հողմնահարված, մեծաբեկորային անջատումներով: Շերտը տողամասում համատարած է, բացահայտվել է բոլոր փորված հորատանցքերում 1,8-6,8մ խորությունների վրա, 7,5մ բացված հզորությամբ: Ֆոնդային նյութերի տվյալների համաձայն, բազալտային լավայի հզորությունը 50մ-ից ավելի է:

Տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ընդհանուր դրույթներ

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է.

- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,
- բացատրագիր,
- կատարվող աշխատանքների անվտանգության պահպանման հրահանգներ,
- աշխատանքի կատարման ժամանակացույց,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- հավելված / մոնտաժային մեխանիզմի ընտրություն,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ/:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնողության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- ГОСТ 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Շինարարության պայմանները

Տեղամասը հիմնականում նհարթ ռելիեֆով մակերեսային ծածկված է բազմաթիվ մանր բլրակներով: Հետազոտությունների կատարման ժամանակ, տարածքում իրականացվել են որոշակի հարթեցման աշխատանքներ: Մակերեսային ընդհանուր թեքությունը հյուսիս -արևելքից հարավ-արևմուտք է, բացարձակ նիշերը տատանվում են 1372-1376մ սահմաններում:

Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկատերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվում:

Փորվածքների մշակման հետլիցքի աշխատանքներն իրականացնելիս պահպանվելու է СНИП 3,02.02-87 <<Հողային կառուցվածքներ, հիմնատակեր և հիմքեր>> պահանջները:

Շենքն ունի 3 վերգետնյա և 1 կիսանկուղային հարկ, ընդ որում հարկերի օգտակար մակերեսն ըստ բարձրության նվազում են ի հաշիվ բարդ կոնֆիգուրացիայի աստիճանի, որը օբյեկտի ճարտարապետական հորինվածքի առանցքային բաղադրիչներից է:

Շենքի առավելագույն բարձրությունը մոտ 20մ է:

Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ Նախապատրաստական փուլում իրականացվելու են.

- ժամանակավոր ցանկապատում
- երկրաբաշխական հիմնական ցանցի կառուցում
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շին ությունների կարգավորում
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շին հրապարակ
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ
- անիվների լվացման կետի տեղադրում
- անվտաբնգության նշանների տեղադրում
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 18 ամիս՝ 1,5 օրացուցային տարի, շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Օրացուցային պլանը, նախահաշվային արժեքի բացակայության հետևանքով, մշակվել է մեկ միավոր մասի շինարարության համար ըստ նորմերով նախատեսված այլընտրանքային ձևի / ժամանակացույց/:

Առաջարկություններ շինարարության հրապարակի կազմակերպման և բեռնամբարձ մեխանիզմների օգտագործման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Որպես հիմնական մոնտաժային միջոց ընտրվել է **Галичанин КС-55713-6** վերամբարձ ավտոկռունկը, որը կարող է ըստ կարիքի, կամ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում տվյալ տեխնիկական ապահովելու և տեխնիկոնտեսական նկատառումներից ելնելով փոխարինվել: Հնարավոր է օգտագործել նրանցից մեկը կամ կառուցմանը զուգահեռ փոխարինել մեկը մյուսով: Առանձին փոքրածավալ վերհանների օգտագործումը նորմայավորված չէ:

Որպես այլընտրանքային տարբերակներ կարող են առաջարկվել համապատասխան տեխնիկական տվյալներով այլ կռունկներ:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձի, պահեստավորման մակերեսների, տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

Ժամանակավոր էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, իսկ ջրամատակարարումը՝ քաղաքային ցանցից:

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	HYUNDAI R170W-7	1
2	Բուլդոզեր	CAT D6R	1
3	Շարժական կոմպրեսոր	Comp air C76	1
4	վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-55713-6	1
5	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
6	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1
7	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
8	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
9	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
10	Եռակցման տրանսֆորմատոր կամ ձեռքի ինվենտոր	ТД-500	6
11	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1
12	Թրթուրավոր ինքնագնաց կրունկ	РДК 250	1

13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
14	Ավտոինքնաթափ	KAMA3 55111	Հաշվարկով
15	Ավտոբետոնախառնիչ	KAMA3 58149 z	Հաշվարկով
16	Գլխոն	CAT CS 563	1

Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունը ապահովում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է.

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը,

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը,

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգը ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա,

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության 28.04.1998 թ. Թիվ 44 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ-ի դրույթների համաձայն:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաներ, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Գործույթային հսկման նպատակն է թերությունների բացահայտումը շինարարության ընթացքում և դրանց վերացման կամ կանխման միջոցառումների սահմանումը:

Գործույթային հսկումը ենթադրում է շինարարական և մոնտաժային պրոցեսների տեխնոլոգիայի պահպանման, նախագծային փաստաթղթերին, նորմերին, կանոններին համապատասխանության ապահովման միջոցառումներ:

Գործույթային հսկման արդյունքները գրանցվում են շինարարության վարման մատյանում:

Գործույթային հսկումն իրականացվում է տեխնոլոգիական քարտեզի կազմում առկա որակի օպերացիոն հսկման սխեմաների և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Գործույթային հսկման սխեմաները պետք է ընդգրկեն կոնստրուկցիաների ուրվագծերը /էսքիզները/ չափսերի և թույլատրելի շեղումների նշմամբ, որոշ դեպքերում երկրաբաշխական/գեոդեզիական/ ծառայության կամ շինարարական լաբորատորիայի կողմից հսկվող օպերացիաների և պրոցեսների ցանկը, ինչպես նաև հսկման կազմի ժամկետների և եղանակների վերաբերյալ տվյալներ:

Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունը ապահովում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է.

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը,

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը,

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգը ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա,

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. թիվ 44 <<ՇԻՆԱՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ>>-ի դրույթների համաձայն:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաներ, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Գործույթային հսկման նպատակն է թերությունների բացահայտումը շինարարության ընթացքում և դրանց վերացման կամ կանխման միջոցառումների սահմանումը:

Գործույթային հսկումը ենթադրում է շինարարական և մոնտաժային պրոցեսների տեխնոլոգիայի պահպանման, նախագծային փաստաթղթերին, նորմերին, կանոններին համապատասխանության ապահովման միջոցառումներ:

Գործույթային հսկման արդյունքները գրանցվում են շինարարության վարման մատյանում:

Գործույթային հսկումն իրականացվում է տեխնոլոգիական քարտեզի կազմում առկա որակի օպերացիոն հսկման սխեմաների և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Գործույթային հսկման սխեմաները պետք է ընդգրկեն կոնստրուկցիաների ուրվագծերը /էսքիզները/ չափսերի և թույլատրելի շեղումների նշմամբ, որոշ դեպքերում երկրաբաշխական/գեոդեզիական/ ծառայության կամ շինարարական լաբորատորիայի կողմից հսկվող օպերացիաների և պրոցեսների ցանկը, ինչպես նաև հսկման կազմի ժամկետների և եղանակների վերաբերյալ տվյալներ:

Նյութերի և բնատեսությունների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնատեսությունների օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակները, որոնքը կառաջանա շինարարական աշխատանքերի իրականացման ամբողջ /1,5 տարի/ ընթացքում դա կենցաղային աղբն է մոտ 49680կգ քանակով(ամբողջ շինարարական ժամանակահատվածի համար) և շինարարական աղբն՝ 1850մ³ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից՝ ըստ կնքված պայմանագրի:

Շահագործման փուլում կենցաղային աղբի հավաքման և տարածքից հեռացման համար շենքերի նկուղային հարկերում նախատեսվում է տարածք, որի վերջնական տեղը կհստակեցվի օպերատորի հետ աղբահան մեքենաների տեսակը ճշտելուց հետո:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 62 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է

$W_{\text{խ.տ.}} = 5,16 \text{ մ}^3/\text{օր}$:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 20մ^2 ,

K_1 – 1մ^2 օրական ջրցանի նորմը, $0,0015 \text{մ}^3$,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 3

Q – Կառուցվող շենքերի քանակը 1 հատ

$U_1 = 0,08 \text{մ}^3/\text{օր}$

Դռղերի լվացման և բետոնի խնամքի համար անհրաժեշտ ջրաքանակը համապատասխանաբար կկազմի՝ $1,4 \text{մ}^3/\text{օր}$ և $2,07 \text{մ}^3/\text{օր}$:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի $5,16 \text{մ}^3/\text{օր}$:

Աքսելերատի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շահագործման փուլում ջեռուցումը նախատեսվում է կաթսայատան միջոցով :

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Աշխատողների կենցաղային պայմանները կապահովեն համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանություն

Կապալառուն շինարարություն և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս ապահովում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և շինարարական աշխատանքների անվտանգությունը համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 749 հոդվածի:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից նրանց անհատական պաշտպանության միջոցների տրամադրմամբ (հատուկ արտահաքուստ, կոշիկ և այլն), բանվորների կուլեկտիվ պաշտպանության միջոցների

կատարումով (արգելափակում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգլակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքերով գործող ՄՆԻՊ III-4-80* նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ հրահանգումն անց է կացվում ներածական, սկզբնական, կրկնվող, արտապլանային և ընթացիկ հրահանգումների ձևով:

Շինարարությունում զբաղված բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցում, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարիայի հետ կապված բոլոր միջոցառումների կատարումը կատարվում է աշխատանքներն իրականացվող կազմակերպության համապատասխան լիազորված անձի կողմից:

Էլեկտրաշարժիչով շինարարական մեքենաների մետաղական մասերը պետք է հողանցվեն:

Արգելվում է բարձրության վրա մոնտաժային աշխատանքներ իրականացնել քամու 6 բալլ արագության գերազանցման դեպքում:

Ավտոտրանսպորտի շարժման արագությունը շինհրապարակում պետք է գերազանցի 5կմ/ժամ:

Աշխատանքային տեղերի լուսավորման համար կիրառել 16 Վ լարմամբ էլեկրալուսավորման սարքեր: Շինհրապարակի լուսավորությունը պետք է 2 լք-ից նվազ չլինի:

Շենքի ներսում արգելվում է եռակցման և ներկարարական աշխատանքների իրականացումը պատշաճ օդափոխության բացակայության պարագայում:

Հակահրդեհային պաշտպանությունը պետք է իրականացվի համաձայն համապատասխան կանոնների: Կոնկրետ հակահրդեհային միջոցառումները պետք է մշակվեն ԱԿՆ-ում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

2.1.1 Կլիմայական պայմաններ՝

Երևանի կլիման մայրցամաքային է բարձր տատանման ամպլիտուդով, չոր ձմեռ և տաք ամառ:

Ստորև ներկայացվում է համաձայն «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերը»-ի կլիմայի հարաչափերը՝

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանիանվանումը	Բարձրությունծովիմակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջինտարեկան. °C	Բացարձակառեկան. °C	Բացարձակառեկան. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան «Ագրո»	942	-4.2	-1.2	5.2	12.3	17.0	21.6	25.5	25.3	20.6	13.3	5.6	-0.8	11.7	-30	41
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41
Երևան «Զվարթնոց»	854	-3.7	-1.3	5.9	13.1	17.5	22.2	26.3	25.8	20.7	13.3	5.9	-0.2	12.1	-30	42
Երևան «Էրեբունի»	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանիանվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջինտարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Ագրո»	78	74	64	58	58	51	45	45	49	61	74	79	61	62	33
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35
Երևան «Զվարթնոց»	81	76	64	57	58	50	47	46	50	63	74	82	62	67	30
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների												Առավելագույն օրական ձյան ընթացքը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ի հառավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան «Ագրո»	22	24	31	41	46	27	16	8	11	27	26	23	302	46	41	113
	20	26	33	25	40	25	21	24	29	33	23	24	40			
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			
Երևան «Զվարթնոց»	25	21	36	39	42	19	12	9	10	25	25	23	286			
	18	24	34	30	20	24	21	14	22	33	23	16	34			
Երևան «Էրեբունի»	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47	

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնշում (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %									Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում
			Միջին արագությունը, ուղղությունների մ/վ													
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)	Հյուսիսային-Արևմտյան (ՀսԱրմ)					

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	25 00	1 00	0
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	22 03	2 5	2
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							
Երևան «Զվարթնոց»	917,5	հունվար	14	22	8	9	15	13	12	7	66	0,8	2,1	46	22 12	2 3	2
			2,2	2,8	2,3	2,6	2,4	2,2	2,7	2,4							
		ապրիլ	11	25	10	13	17	10	9	5	21	2,7					
			3,5	3,7	3,1	3,8	3,2	3,5	4,2	3,3							
		հուլիս	17	31	8	11	16	8	5	4	16	3,8					
			6,4	6,5	3,1	2,9	2,7	2,8	3,0	3,5							
		հոկտեմբեր	13	27	10	12	17	9	7	5	41	1,6					
			2,9	3,2	2,6	2,7	2,5	2,6	3,2	2,7							
Երևան «Էրեբունի»	912,1	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0,7	1,5	29	22 27	2 9	2
			2,2	2,2	2,2	2,9	2,7	2,3	2,6	2,7							
		ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9					
			3,1	3,2	2,8	4,0	3,1	3,0	3,8	3,6							
		հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2,8					
			5,2	5,7	2,8	2,7	2,4	2,7	2,9	4,3							
		հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1,0					
			2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5							
Թալին	834,9	հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1,5	1,9	49	22 69	3 1	3

2.1.2 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) համեմատությամբ: Հիմնական աղտոտիչների ՄԹԿ-ների արժեքները բերված են ստորև.

2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2020 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում: Համաձայն իրականացված արդյունքների 2020 թվականին 2019 թվականի համեմատությամբ բարձրացել են Վանաձոր, Ալավերդի և Հրազդան քաղաքների փոշու, Երևան, Գյումրի, Վանաձոր, Քաջարան և Չարենցավան քաղաքների ազոտի երկօքսիդների և Երևան քաղաքի ծծմբի երկօքսիդի պարունակությունները:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են ՄԹԿ-ի տիրույթում, բայց ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են ՄԹԿ-ի տիրույթում, բայց ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են


գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:


Փոշով աղտոտվածության գերազանցումները հիմնականում դիտվել են Հրազդան, Ալավերդի և Վանաձոր քաղաքներում: Տարվա ընթացքում Հրազդանում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները գերազանցել են ՄԹԿ-ն 1.2-2.9 անգամ, Վանաձոր քաղաքում՝ 1.2-2.0 անգամ, Ալավերդի քաղաքում՝ 1.1-3.4 անգամ, Արարատ քաղաքում՝ 1.1-1.2 անգամ:

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված աղտոտիչների կոնցենտրացիաներն՝ ըստ քաղաքների:










*-Հրազդան և Արարատ քաղաքներում ՍԹԿ=0.1 մգ/մ³

2020 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ քաղաքների փոշում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:


Ստորև ներկայացվում է փոշու մեջ պարունակող մետաղների միջին տարեկան կոնցենտրացիաներն՝ ըստ քաղաքների.






Կադմիում (Cd)

Կոնց. (նգ/մ³)




Արսեն (As)
Կոնց. (նգ/մ³)




Մոլիբդեն (Mo)

Կոնց. (նգ/մ³)



Պղինձ (Cu)

Կոնց. (նգ/մ³)



Երևան քաղաքի 5 անշարժ դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 6191 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների, փոշու և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Երևան քաղաքի ավտոմատ դիտարկման կայաններում մթնոլորտում ածխածնի մոնօքսիդի պարունակությունը որոշելու համար կատարվել է օդի 36012 դիտարկում:

Քաղաքների մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակ

Հանրապետության մթնոլորտային օդի որակի դիտարկումները 2020թ.

Քաղաքները	2020թ. գործող դիտակայաններ			Փորձանմուշների քանակը	
	Ակտիվ	Պասիվ (դիտակետ)	Ավտոմատ		
Երևան	5	45	1	ակտիվ	6191
				պասիվ	4102
				ավտոմատ	36012
Գյումրի	1	24		ակտիվ	339
				պասիվ	2215
Վանաձոր	3	24		ակտիվ	3187
				պասիվ	2341
Ալավերդի	3	42		ակտիվ	2751
				պասիվ	3584
Հրազդան	1	17		ակտիվ	1054
				պասիվ	1615
Արարատ	1	12		ակտիվ	338
				պասիվ	1100
Կապան		11		պասիվ	504
Քաջարան		15		պասիվ	688
Չարենցավան		10		պասիվ	806
Ծաղկաձոր	1	14		ակտիվ	1061
				պասիվ	1340
Ընդամենը	15	214	1	69228	
Ամբերդ	1			ակտիվ	571

Երևան

Քաղաքի №1, №2, №7, №8, №18 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են մթնոլորտային օդի դիտարկումներ: Վերցվել է օդի 6191 փորձանմուշ, որոնցում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով:

2020թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը՝ (ՄԱՑ) 1.82 է (փոշի՝ 0.78, ծծմբի երկօքսիդ՝ 0.25, ազոտի երկօքսիդ՝ 0.75, գետնամերձ օզոն՝ 0.04):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց՝ (աղյուսակ 4):

Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են քաղաքի 42 դիտակետերում, վերցվել է օդի 4102 փորձանմուշ:


Երևան քաղաքի մթնոլորտում նյութերի տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Աղյուսակ 2. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները


Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակը 2020թ. ընթացքում		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	0.054 (դիտ. N2)	5	-	0.012	0.05
Ազոտի երկօքսիդ	0.099 (դիտ. N7)	372	35	0.032	0.04
Փոշի	0.563 (դիտ. N1)	316	15	0.116	0.15
Գետնամերձ օզոն	0.038 (դիտ. N8)	14	14	0.004	0.03

- ՄԱՑ-ը և տեղեկացրել հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության 2006թ. նոյեմբերի 24-ի N379-Ա հրամանի համաձայն՝ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/laws/Hraman%20379.pdf>

Ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Ծծմբի երկօքսիդ (SO₂)

Երևան


Կոնց. (մգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օգոնի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Գետնամերձ օզոն (O₃)

Երևան




Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը 2020թ

Միացություն	Դիտակայան	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	Փորձանմուշների քանակ
Փռչի	1	0,124	134
	2	0,089	352
	7	0,097	351
	8	0,115	352
	18	0,159	353
Ծծմբի երկօքսիդ	1	0,010	132
	2	0,011	357
	7	0,016	354
	8	0,011	357
	18	0,015	357
Ազոտի երկօքսիդ	1	0,028	132
	2	0,022	356
	7	0,034	356
	8	0,042	356
	18	0,034	356
Գետնամերձ օդոն	1	0,006	132
	2	0,004	351
	7	0,004	351
	8	0,005	351
	18	0,004	351


. Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաների (մգ/մ³) փոփոխությունները 2016-2020թթ.

Միացություն	Բնութագրիչ	Տարեթիվ					Տեղեկաց
		2016	2017	2018	2019	2020	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,095	0,143	0,110	0,128	0,117	0,0027
	Փորձանմուշների քանակ	2356	2401	1711	1729	1542	
Ծծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,028	0,029	0,028	0,018	0,013	-0,0043
	Փորձանմուշների քանակ	2358	2428	1764	1757	1557	
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,023	0,022	0,020	0,015	0,032	0,0010
	Փորձանմուշների քանակ	2393	2403	1762	1751	1556	
Գետնամերձ օդն	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,005	0,008	0,007	0,006	0,004	-0,00043
	Փորձանմուշների քանակ	2402	2394	1763	1738	1536	

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2020 / ԵՐԵՎԱՆ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2020 / ԵՐԵՎԱՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

- | | | |
|--|---------------------------------|---|
| | Ազոտի և նոլաչառման դիտակայաններ | Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ ³) |
| | Պատիվ նոլաչառման դիտակետեր | |
| | Արդյունաբերություն | |
| | Գետային ցանց | |
| | Ճանապարհային ցանց | |
| | Տեղական նշանակության | |
| | Միջպետական նշանակության | |
| | Երկաթուղային ցանց | |
| | Լճեր և ջրամբարներ | |
| | Բնակավայրեր | |
| | Բնակավայրի սահման | |
| | 0 0.45 0.9 1.8 2.7 3.6 կմ | |



Չովաշեն (Ազատ)



Ազատ

Մույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.1.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2020 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ» կամ «միջակ» որակի է (2-րդ կամ 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:




ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը


Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2020 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 24%-ը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 37%-ը գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ը գնահատվել է 4-րդ դաս («անբավարար» որակ) և 25%-ը գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):


2020 թվականին ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը
(դիտակետերի ընդհանուր թիվ 104)




2020 թվականին ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը
(դիտակետերի ընդհանուր թիվ 6)



ՀՀ գետերի ջրի որակը 2020 թվականին



ՀՀ մակերևութային ջրերի որակը 2020 թվականին



ՀՀ գետերի ջրի որակը 2020 թվականին

Հրազդան	Քասախ	0.5 կմ ք. Ապարանից վերև (43)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Ապարանից ներքև (44)	Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրիտ իոն, երկաթ, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Քասախ	1 կմ ք.Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն, վանադիում ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		3.5 կմ ք.Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն, վանադիում ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, կալիում, ՇԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրատ իոն		4-րդ		
	Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	Ցինկ, նիկել, երկաթ	3-րդ	5-րդ
			Բերիլիում, ալյումին	4-րդ	
			Մանգան, կոբալտ	5-րդ	
	Գետաբերան (49)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, կալիում, ՇԱԱ	3-րդ	3-րդ	
		Շաղվարդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ
	Վանադիում *			4-րդ	
	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51*)	ԹՔՊ, մանգան, նատրիում, բոր	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹՔՊ, երկաթ, բարիում,	3-րդ	5-րդ
			Կալիում	4-րդ	
			Մանգան, վանադիում	5-րդ	
		0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹՔՊ, ՇԱԱ	3-րդ	5-րդ
			Մանգան, բարիում, կալիում	4-րդ	
			Ամոնիում իոն, վանադիում	5-րդ	
		0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹՔՊ, մանգան, բարիում, կալիում	3-րդ	5-րդ
	Վանադիում*		5-րդ		

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Հրազդան	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ (55)	Նիտրիտ իոն, երկաթ, նատրիում, անագ, քլորիդ իոն, ԸԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
			ԹԿՊ ₅ , ԹՔՊ, կոբալտ, բարիում, կալիում	4-րդ	
			Լուծված թթվածին, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
		Գետաբերան (56)	Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրատ իոն, կոբալտ, երկաթ, բարիում, նատրիում, ԸԱԱ, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, կալիում, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն, վանադիում*	5-րդ	
		Գյ. Գեղանիստ (225)	ԹՔՊ, նիտրատ իոն, երկաթ, բարիում, նատրիում, քլորիդ իոն, ԸԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մանգան, կալիում	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հրազդան	Գետառ	Գետաբերան (59)	ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, կոբալտ, երկաթ, կալիում	3-րդ	5-րդ	
			ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ		
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	5-րդ		
	Մարմարիկ	0.5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	-	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (58)	Երկաթ, մանգան, բարիում, կալիում, ալյումին	3-րդ	3-րդ	
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Վանադիում, կոբալտ, երկաթ, բարիում, բերիլիում	3-րդ	4-րդ	
				Ալյումին, մանգան		4-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹՔՊ, նիտրիտ իոն, կոբալտ, երկաթ, բերիլիում, կալիում, ալյումին, ԸԱԱ	3-րդ	5-րդ	
				Ֆոսֆատ իոն, վանադիում, բարիում, ընդհանուր ֆոսֆոր		4-րդ
				Ամոնիում իոն, մանգան		5-րդ
Սևան		Ձկնագետ	0.5 կմ գյ. Սեմյոնով-կայից վերև (60)	-	2-րդ	2-րդ

Հրազդան ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով: Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, նիտրատ, ֆոսֆատ իոններով, մանգանով, երկաթով, կալիումով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:


Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով, մանգանով, բարիումով և կալիումով:

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

Միջին տարեկան
կոնց. (Ագ/լ)

Ճուֆատ իոն


Քառափ գետ



Միջին տարեկան
կոնց. (ԱգN/լ)

Ամոնիում իոն


Քառափ գետ







Միջին տարեկան
կոնց. (ԱգN/լ)

Ամոնիում իոն


Հրազդան գետ







ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2020 թվական



Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.1.4 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ակալիացած աղակալած:

Հողային ռեսուրսներ

Քաղաք արքելերատորի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքի տեղադրման համար կատարվելու է մոտ 8560.0մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող հողային զանգվածի մի մասը՝ 4690.0մ³ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած մասը ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք և տարածքի հարթեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.1.5 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 49680 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարական աղբն ընդհանուր 1850մ³ ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:

Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Յուրաքանչյուր շենքի անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շենքի շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն անջրթափանց 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
 - աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
 - Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը

- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույթներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Թափոնների կառավարում

Բնակելի շենքի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք է տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատկացված աղբավայր:

- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բիզնես արտելերատորի շենքի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը կտեղափոխվի պայմանագրային հիմունքներով:

Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է դրական փորձաքննական եզրակացություն:

Ծառերի և թփերի տնկման աշխատանքները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման նախագծին համապատասխան:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

Մշտադիտարկումների իրականացման պլան

Շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացնի աճի և կայացողականության գնումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասհանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 820000 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
<p align="center">Ընդհանուր դրույթներ</p>	<p>Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն</p>	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
<p align="center">Շինարարական աշխատանքներ</p>	<p align="center">Օդի որակ</p>	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p> <p>(d) Շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:</p>
	<p align="center">Աղմուկ</p>	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային կարիքների համար կտեղադրվեն բիոզուգարաններ:</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառու պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի</p>

<p>Տարածքի բարեկարգում/ կանա չապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>Թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան</p>	<p>բարեկարգման պլանների; -ձեռնարկել տնկված թփերի, ծառերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը
---	--	--

	<p>վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<p>հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</p>
--	---	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ	- Շինանյութերի գնում	Իներտ	Փաստաթղ	Մատակա	Կապա

շինանյութերի գնում	վատահեղի մատակարարներից	նյութերի պահեստ	թերի ստուգում Գործընթացների ստուգում	րարման ընթացքում	լառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության թփերի և այլ բուսականության նորմա	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում	Շինարարության Ավարտին	Կապալառու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
13. Թափոնների մասին ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2004թ մայիսի 20-ի ՀՀ վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին թիվ 874-Ն որոշումը, ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ հոկտեմբերի 26-ի 342-Ն հրամանը
14. Թափոնների մասին ՀՀ օրենքը,
15. ՀՀ կառավարության 2004թ մայիսի 20-ի ՀՀ վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին թիվ 874-Ն որոշումը,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ հոկտեմբերի 26-ի 342-Ն հրաման: